ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
24 մայիսի 2022 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8/4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 8-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 4-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 55 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Գևորգ Սիմոնյանը, Ստեփան Մաչյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Արամ Դանիելյանը, Գարիկ Բարսեղյանը, Սուսաննա Գրիգորյանը, քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը, իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը, կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը, տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը, առողջապահության վարչության պետի պաշտոնակատար Յակով Ասատրյանը, հանրակրթության վարչության պետի պաշտոնակատար Մարգարիտ Խաչատրյանը, ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը, մշակույթի վարչության պետ Գոշ Սարգսյանը, «Երևաննախագիծ» ՓԲ ընկերության տնօրեն Սիրեկան Օհանյանը, «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲ ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի հունիսի 21-ին, ժամը 11.00-ին:

ՈՐՈՇՎԵՑ – Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2022 թվականի հունիսի 21-ին, ժամը 11.00-ին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 43, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը տեղեկացրեց.

Երևանի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Աշոտ Առուշանյանը դիմում է ներկայացրել ավագանու անդամի իր լիազորությունները դադարեցնելու մասին:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2022 թվականի մայիսի 3-ի հ.61 արձանագրության՝ Երևանի ավագանու ԻՄ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվել է Իմ Քայլը կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Տիգրան Մակարյանին:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ 2022 թվականի մայիսի 24-ի նիստի օրակարգի նախագծից հանում է օրակարգի 15-րդ՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» (Երևան քաղաքի Ն. Չարբախ փողոցի հ.43 հասցե) հարցը:

Լ.Հովհաննիսյանն առաջարկեց օրակարգի նախագծի 6-րդ՝ «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» հարցը տեղափոխել որպես օրակարգի նախագծի 25-րդ հարց:

Ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար Անի Խաչատրյանը և առաջարկեց օրակարգի նախագծից հանել 6-րդ՝ «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» հարցը:

Ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու անդամներ՝ Էռնեստ Ավանեսովը և Իզաբելլա Աբգարյանը:

2022 թվականի մայիսի 24-ի նիստի օրակարգի 6-րդ՝ «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» հարցը օրակարգի նախագծից հանելու վերաբերյալ առաջարկը դրվեց քվեարկության:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 10, դեմ՝ 28, ձեռնպահ՝ 7

Առաջարկը չընդունվեց:

Լ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ 2022 թվականի մայիսի 24-ի նիստի օրակարգի 6-րդ՝ «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» հարցը տեղափոխվում է որպես օրակարգի նախագծի 25-րդ հարց:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2022 թվականի մայիսի 24-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
6. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:
7. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին:
8. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
9. «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
10. «Երևանի ավտոբուս» փակ բաժնտիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
11. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:
12. Հուշատախտակների տեղադրման մասին:
13. Երևան քաղաքում Արտաշես Քալանթարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:
14. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
15. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

19. Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

20. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

21. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

22. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն և 2021 թվականի մայիսի 25-ի N390-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

23. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

24. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

25. Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին:

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 8-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 28, դեմ՝ 9, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

2. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն որոշման NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-4 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

3. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

4. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

«Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

1. Մարկոս Հարությունյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար
2. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Սերգեյ Գյոզալյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը և քաղաքապետի տեղակալ Ս. Մաչյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի N497-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Դավիթ Խաժակյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման հավելվածի 114-րդ կետի 18-րդ ենթակետով, Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյանը մինչ քվեարկության անցկացումը՝ խնդրեց մինչև տասնհինգ րոպե ընդմիջում:

ԸՆԴՄԻՋՈՒՄ:

Նիստը վերսկսվեց ժամը 12.15-ին:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի 2022 թվականի բյուջեի մասին» N497-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1-5 հավելվածների:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 42 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

5. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի վարչության պետ Գոշ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Սերգեյ Գյոզալյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Արման Անտոնյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Տիգրան Գալստյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը, աշխատակազմի մշակույթի

վարչության պետ Գ.Սարգսյանը, աշխատակազմի հանրակրթության վարչության պետի պաշտոնակատար Մ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N 16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 10-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման N 1 հավելվածի «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի 1-ին կետի 20-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) Մշակույթի և տուրիզմի վարչություն».

2) Որոշման N 2 հավելվածում.

ա. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մշակույթի վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Մշակույթի և տուրիզմի վարչություն				
1	Վարչության պետ	1	697000		697000
2	Վարչության պետի տեղակալ	1	561000		561000
	Մշակույթի բաժին				
3	Բաժնի պետ	1	408000		408000
4	Գլխավոր մասնագետ	4	289000		1156000
5	Առաջատար մասնագետ	2	282200		564400
	Տուրիզմի բաժին				
6	Բաժնի պետ	1	408000		408000
7	Գլխավոր մասնագետ	2	289000		578000
8	Առաջատար մասնագետ	1	282200		282200
	Ընդամենը	**13**			**4654600**

»,

բ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն» գլխի «քաղաքացիական պաշտպանության բաժին» բառերը փոխարինել «արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բաժին» բառերով,

գ. «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Հանրակրթության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

	Հանրակրթության վարչություն				
1	վարչության պետ	1	697000		697000
2	վարչության պետի տեղակալ	2	561000		1122000
3	գլխավոր մասնագետ	8	323000		2584000
4	առաջատար մասնագետ	4	289000		1156000
5	առաջին կարգի մասնագետ	3	282200		846600
	Ընդամենը	**18**			**6405600**

»

դ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Առողջապահության վարչություն» գլխի 2-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «11» և «4,212,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «10» և «3,964,400» թվերով,

ե. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Արտաքին ձևավորման և գովազդի վարչություն» գլխի 9-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «14» և «4,834,800» թվերը փոխարինել համապատասխանաբար «13» և «4,586,600» թվերով,

զ. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն» գլխի 4-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «24» և «8,122,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «23» և «7,874,400» թվերով,

է. ուժը կորցրած ճանաչել «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Մարդկային ռեսուրսների կառավարման վարչություն» գլխի 2-րդ կետը ու այդ կապակցությամբ «Ընդամենը» տողում «16» և «5,314,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «15» և «5,066,000» թվերով,

3) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «707.5» և «234,696,000» թվերը փոխարինել համապատասխանաբար «698.5» և «232,577,800» թվերով,

4) «Ամբողջը» տողում «1997.5» և «607,788,200» թվերը փոխարինել համապատասխանաբար «1988.5» և «605,670,000» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի

Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

6. ԼՍԵՑԻՆ - Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների 2021 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի 1-ը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 48, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Որոշումն ընդունվել է միաձայն:

7. ԼՍԵՑԻՆ - «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Սաթենիկ Մկրտչյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Դիանա Քերոբյանը տեղեկացրեց, որ ««Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահութաբաժնի գծով պարտավորության և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների՝ Երևան քաղաքի բյուջե վճարումից ազատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2020 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթից Երևանի բյուջե վճարման ենթակա 11969.4 հազ.դրամ (տասնմեկ միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր դրամ) շահութաբաժնի գծով պարտավորության մայր գումարի, ինչպես նաև՝ սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկվող տոկոսների վճարումից:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԸՆԴՄԻՋՈՒՄ.

Նիստը վերսկսվեց ժամը 14.00-ին:

8. ԼՍԵՑԻՆ - «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան–Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Էդգար Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը և աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ ««Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ 25.000.000 (քսանհինգ միլիոն) դրամով ավելացնելու նպատակով լրացուցիչ 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 100 դրամ անվանական արժեքով) տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 43.305.300 (քառասուներեք միլիոն երեք հարյուր հինգ հազար երեք հարյուր) դրամ, որը կազմում է 433.053 (չորս հարյուր երեսուներեք հազար հիսուներեք) հատ 100 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

9. ԼՍԵՑԻՆ - «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 3 անդամ.

1. Արթուր Իսպիրյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արման Անտոնյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

3. Արման Բաբաջանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Արևշատյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ ««Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ 172.593.000 (հարյուր յոթանասուներկու միլիոն հինգ հարյուր իններսուներեք հազար) դրամով ավելացնելու նպատակով լրացուցիչ 172.593 (հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր իններսուներեք) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 1000 դրամ անվանական արժեքով) տեղաբաշխման արդյունքները:

2. «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 2.111.163.000 (երկու միլիարդ հարյուր տասնմեկ միլիոն հարյուր վաթսուներեք հազար) դրամ, որը կազմում է 2.111.163 (երկու միլիոն հարյուր տասնմեկ հազար հարյուր վաթսուներեք) հատ 1000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Փարկինգ Սիթի Սերվիս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 50 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

10. ԼՍԵՑԻՆ - «Երևանի ավտոբուս» փակ բաժնտիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էոնեստ Ավանեսով-Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լ. Հովհաննիսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ ««Երևանի ավտոբուս» փակ բաժնտիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար Մարկոս Հարությունյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ 414.800.000 (չորս հարյուր տասնչորս միլիոն ութ հարյուր հազար) դրամով ավելացնելու նպատակով լրացուցիչ 41.480 (քառասունմեկ հազար չորս հարյուր ութսուն) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 10.000 դրամ անվանական արժեքով) տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 2.796.540.000 (երկու միլիարդ յոթ հարյուր իննսունվեց միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) դրամ, որը կազմում է 279.654 (երկու հարյուր յոթանասունիննը հազար վեց հարյուր հիսունչորս) հատ 10.000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 46 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

11. ԼՍԵՑԻՆ - «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ – Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վիլեն Արևշատյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Արման Անտոնյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը:

2. Իզաբելլա Աբգարյան - Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ ««Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Անուշ Քլոյան–Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

2. Արմեն Ներսիսյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ:

««Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի տեղաբաշխման արդյունքները և կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված՝ 10.710.000 (տասը միլիոն յոթ հարյուր տասը հազար) դրամով ավելացնելու նպատակով լրացուցիչ 1071 (հազար յոթանասունմեկ) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերի (յուրաքանչյուրը՝ 10000 դրամ անվանական արժեքով) տեղաբաշխման արդյունքները:

2. «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 56.420.000 (հիսունվեց միլիոն չորս հարյուր քսան հազար) դրամ, որը կազմում է 5642 (հինգ հազար վեց հարյուր քառասուներկու) հատ 10000 դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

3. Հաստատել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 55 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

12. ԼՍԵՑԻՆ - Հուշատախտակների տեղադրման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Արմինե Վարդանյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել են ավագանու 1 անդամ.

1. Սերգեյ Գյոզալյան-Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Ա. Վարդանյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Հուշատախտակների տեղադրման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1.Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար

2. Արման Անտոնյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Տալ համաձայնություն.

1) լրագրող, արձակագիր, թարգմանիչ Այդին Մորիկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ղազար Փարպեցու փողոց h.11ա հասցեում փակցնելու համար,

2) ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Հրանտ Ադոնցի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բաղրամյան պողոտա h.50 հասցեում փակցնելու համար,

3) պատմաբան, հայագետ, մանկավարժ, պրոֆեսոր Տաճատ Սահակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց h.17 հասցեում փակցնելու համար,

4) օրթոպեդ - վնասվածքաբան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Քրիստափոր Պետրոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Ամիրյան փողոց h.8 հասցեում փակցնելու համար,

5) պետական, քաղաքական գործիչ Միսակ Մկրտչյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոց h.18 հասցեում փակցնելու համար,

6) պետական և հասարակական գործիչ Բերսաբե Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Զարոբյան փողոց h.12 հասցեում փակցնելու համար:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 47, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

13. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքում Արտաշես Քալանթարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևան քաղաքի ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքում Արտաշես Քալանթարյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ճառագայթային փողոցից մինչև Շահումյանի 7-րդ փողոց ձգվող հատվածն անվանակոչել արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, հրապարակախոս Արտաշես Քալանթարյանի անվամբ՝ «Արտաշես Քալանթարյան փողոց»:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 45 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

14. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Լևոն Զաքարյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Նուարդ Վարդանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ն.Չարբախ փողոցի հ.86ա հասցեում գտնվող 700.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 51 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 41, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

15. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ն.Չարբախ փողոցի հ.86ա հասցեում գտնվող 476.0քմ (330.0քմ+146.0քմ) մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 52 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

16. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի հ.35/10 հասցեում «Մուշկապշին» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 3872.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 42, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 5

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

17. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Յ. Լեփսիուսի փողոց 25/1 հասցեում «ԷՅ ՋԵՅ ՀԱՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական

գրանցման հ.22102021-01-0320 վկայական) 0.11603 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը սահմանել «բնակավայրերի»:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 48 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

18. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևան քաղաքի ավագանու անդամ
2. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը և աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ծիծեռնակաբերդի խճուղի հ.4/2 հասցեում գտնվող 2381.4քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 53 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 44, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 6

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

19. ԼՍԵՑԻՆ - Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Նուարդ Վարդանյանը տեղեկացրեց, որ «Հողամասերի նպատակային նշանակությունները փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Դ.Անհաղթ փողոցի հ.հ.13/8 և 13/9 հասցեներում գտնվող Մնացական Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 817.7քմ և 120.0քմ մակերեսներով հողամասերի նպատակային նշանակություններն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխությունների մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 47 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 40, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 7

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

20.ԼՍԵՑԻՆ - Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի պաշտոնակատար Հ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Մարատ Թոխյանը տեղեկացրեց, որ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Միքայել Մանրիկյան – Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
2. Արման Բաբաջանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
3. Մարատ Թոխյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
4. Լևոն Զաքարյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

«Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» ավագանու որոշման նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 49 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 10, դեմ՝ 33, ձեռնպահ՝ 5

Որոշումը չընդունվեց:

21. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

1. Անի Խաչատրյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
2. Մարկոս Հարությունյան - Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության քարտուղար

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Սարգսյանը և աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տ. Մարգարյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի N96-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մայիսի 7-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N 96-Ն որոշումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 41 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 35, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

22. ԼՍԵՑԻՆ - Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն և 2021 թվականի մայիսի 25-ի N390-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար Տարոն Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Էռնեստ Ավանեսով – Երևան քաղաքի ավագանու անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ.Սարգսյանը և քաղաքապետի խորհրդական Կամո Արեյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արմեն Գալջյանը տեղեկացրեց, որ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն և 2021 թվականի մայիսի 25-ի N390-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N359-Ն և 2012 թվականի փետրվարի 14-ի N397-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N622-Ն որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու և վճարումներն ընդունելու Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:»:

2. Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու և Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N390-Ն որոշման 1-ին կետում «գանձման կազմակերպման և իրականացման» բառերը փոխարինել «վճարումներն ընդունելու» բառերով:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

23. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արթուր Մայիլյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Զ.Քանաքեռցու փողոցի հ.137/1 հասցեում գտնվող Դավիթ Սուքիասյանին սեփականության իրավունքով պատկանող 0.71562հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունն արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերի կատեգորիայից փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 44 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

24. ԼՍԵՑԻՆ - Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գարեգին Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Պավել Սարգսյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Գ. Խաչատրյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահի տեղակալ Արթուր Մայիլյանը տեղեկացրեց, որ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ- Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևան քաղաքի Ա.Միկոյան փողոցի հ.31 հասցեում «ԼԱՎ-ՍԱՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.28072015-01-0119 վկայական) 5506.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 39, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

25. ԼՍԵՑԻՆ - Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին:

ԶԵԿՈՒՑԵՑ–Երևանի քաղաքապետի տեղակալ Գևորգ Սիմոնյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 10 անդամ.

1. Տիգրան Գալստյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
2. Էռնեստ Ավանեսով - Երևան քաղաքի ավագանու անդամ
3. Իզաբելլա Աբգարյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
4. Անի Խաչատրյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության քարտուղար
5. Սերգեյ Գյոզալյան- Երևան քաղաքի ավագանու անդամ
6. Լևոն Զաքարյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
7. Միքայել Մանրիկյան- Երևան քաղաքի ավագանու ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար
8. Էդգար Զաքարյան- Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
9. Արման Բաբաջանյան-Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ
10. Անահիտ Ասատրյան - Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Հ. Սարգսյանը, քաղաքապետի տեղակալ Գ. Սիմոնյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Հայկ Միրզոյանը տեղեկացրեց, որ «Երևանի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ - Ելույթների համար գրանցվել են ավագանու 5 անդամ.

1. Թեհմինա Վարդանյան – Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության անդամ
2. Դավիթ Խաժակյան-Երևան քաղաքի ավագանու ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար
3. Իզաբելլա Աբգարյան-Երևան քաղաքի ավագանու անդամ
4. Սերգեյ Գյոզալյան-Երևան քաղաքի ավագանու անդամ
5. Տիգրան Գալստյան – Երևան քաղաքի ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Գ. Սիմոնյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1) Երևանի ենթակայության «Թիվ 1 պոլիկլինիկա», «Թիվ 5 պոլիկլինիկա» և «Քաղաքային էնդոկրին դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 4 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

2) Երևանի ենթակայության «Արաբկիր մանկական պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արաբկիր» առողջության կենտրոն փակ բաժնետիրական ընկերությանը,

3) Երևանի ենթակայության «Սարի Թաղ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 17 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

4) Երևանի ենթակայության «Նորագավիթ պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը,

5)Երևանի ենթակայության «Նուբարարշեն» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել՝ միացնելով «Նոր Արեշ» պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությանը:

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել սույն որոշման 1-ին կետի 1-ից 5-րդ ենթակետերում նշված փակ բաժնետիրական ընկերությունների վերակազմակերպման գործընթացի իրականացումը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ – ավագանու 43 անդամ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 2, ձեռնպահ՝ 4

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կազմեց՝
Ն. Ղուկասյան